ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ը ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ /Ք. ՍՈՒՃՈՈՒ/ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**
   Լիլիթ Տեր-Թորոսյան - ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի ավագ մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Սուճոու), 2024թ. սեպտեմբերի 5-ից 18-ը

   Հրավիրող կողմը՝
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Չինաստանի կառավարություն

3. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցություն «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության երկրների համար նախատեսված «Արևային և քամու էներգիայի ազգային գործարկում» խորագրով դասընթացին:

4. **Քննարկված թեմաները՝**
   Գործուղման ընթացքում Սուճոու քաղաքի գիտության և տեխնոլոգիաների համալսարանի դասախոսների կողմից ներկայացվել են արևային և հողմային էներգետիկայի ոլորտում զարգացման ներկա մակարդակը, այդ ուղղությամբ Չինաստանի ձեռքբերումները և հնարավոր զարգացման ուղիները:

5. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**
   Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Մոլովայի, Իրաքի, Հորդանանի, Մյանմարի, Սուրինամի, Սլովենիայի ներկայացուցիչները (26 մասնակից):
   Դասընթացի ընթացքում եղել են դասախոսություններ հետևյալ թեմաներով՝
   - արևի և քամու էներգիայի ռեսուրսների և զարգացման կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում (Չինաստանի օրինակով)
   - Չինաստանում արևային և քամու էներգիայի շահագործման պայմանները
   - էներգիայի և ռեսուրսների կառավարման համակարգը, ապագա ենեռգետիկ համակարգի տեսլականի ներկայացու (արևային, քամու և ջրածնի էներգիայի օրինակով)
   - էներգիայի պահպանման տեխնիկաները:

- Այցելել ենք Յանչենգ քաղաք, որտեղ կազմակերպվել է շրջայց հողմային, արևային և ջերմային կայաններ: Ինչպես նաև «Higer» էլեկտրոմոբիլների գործարան:

6. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Ավարտելով «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության երկրների համար նախատեսված «Արևային և քամու էներգիայի ազգային գործարկում» խորագրով դասընթաց՝ ելույթով հանդես եկավ Սուճոու քաղաքի գիտության և տեխնոլոգիաների համալսարանի ռեկտոր Յ. Քսյաոգանգը: Մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր:

7. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

24 սեպտեմբերի 2024թ.